ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0014, ք. Երևան, Հր. Ներսիսյան 10 , հեռ.: (010)- 24-08-21 , civ.yerevan@court.am , www.court.am

ԴԴԱ-8.2/Ե-_____
«23» նոյեմբերի 2023թ.
Քաղաքացիական գործ ԵԴ2/38631/02/23

Հայցվոր՝ «Ա.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը
(հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 2/1
էլ. հասցե՝ savgrouptender@gmail.com)

Պատասխանող՝ **«Սուրբ Աստվածամայր»ԲԿ ՓԲ ընկերությանը**
(հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արտաշիսյան 46/1
էլ. հասցե՝ sa.mc@mail.ru)

ՀՀ ֆինասների նախարարությանը
(հասցե՝ քաղաք Երևան, Մելիք-Ադամյան փողոց, 1 շենք
էլ. հասցե՝ secretariat@minfin.am)

Ձեզ է ուղարկվում թիվ ԵԴ2/38631/02/23 քաղաքացիական գործով 23.11.2023 թվականի «Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին» դատարանի որոշումը:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ **Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/38631/02/23*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2023 թվականի նոյեմբերի 23-ին քաղաք Երևան

քննարկելով «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Վարդանյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Վարդանյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) գրասենյակ է մուտքագրվել 17.11.2023 թվականին, իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 20.11.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Վարդանյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերությունը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ս.Ա.Վ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Վարդանյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերությունից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերությունն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**